# ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ԴԵՐԸ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՓՈՒԼԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

ՄՈՐԹԵԶԱ ՌԱՄԵԶԱՆԻ (ԻՐԱՆ)

Գլոբալացումը՝ որպես մշակութային, սոցիալական, տնտեսական և քաղաքական զանազան կողմերով օժտված կարևոր և նորահայտ երևույթ, որն իր ազդեցությունն է թողնում բոլոր կառուցվածքների վրա, անխուսափելիորեն ներգործել է ցանկացած երկրի էլիտայի վրա, և յուրաքանչյուրն իր առանձնահատուկ մոտեցումն ու հայացքն ունի դրա նկատմամբ: Մեր նպատակն է պարզել Իրանի էլիտայի հարցում դրա անհրաժեշտությունը:

**Ներածություն**

Հետազոտության գլխավոր հարցադրումն է՝ «Իրանի քաղաքական էլիտայի դերը գլոբալացման փուլին միանալու հարցում»:

Այդ շրջանակներում առաջարկվել է հետևյալ վարկածը. «Իրանի քաղաքական էլիտան խոչընդոտում է միանալ գլոբալացմանը կամ այդ կարևոր գործընթացին միանալու զարգացման գործոնն է»: Որը և փորձում ենք հիմնավորել:

Հետազոտության գլխավոր փոփոխականն է՝ գլոբալացումը, իսկ կախյալ փոփոխականը՝ քաղաքական էլիտան:

Հետազոտության մեթոդաբանությունը. կիրառվել է նկարագրական և վերլուծական մեթոդը:

Անցյալում կատարված հետազոտությունները. մինչ այս գլոբալացման և քաղաքական էլիտայի վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններ են իրականացվել, սակայն բավականին սակավաթիվ են գլոբալացման ընթացքի վրա էլիտայի ազդեցության շուրջ ուսումնասիրությունները:

Էլիտայի կողմից հասարակության ուղղորդումն ու վերահսկումը հիմնված են սոցիոլոգիական մոտեցման վրա, որն ընդգրկում է համապատասխան քաղաքականությունը, մշակույթն ու տնտեսությունը և ներքին ու համաշխարհային հասարակությունների շուրջ ուսումնասիրություններն ու հետազոտությունները, ինչպես նաև հեռատեսությունն ու երկրի ապագայի նկատմամբ ուշադրությունը: Զզարգացած երկրների (երրորդ աշխարհի) իրողություններից է այն, որ հանրության և էլիտայի շահերի աստիճանի ու տեսակետների միջև

մեծ տարածություն է առաջացել, և սոցիոլոգիական մոտեցման առկայության դեպքում այն հանգեցնելու է էլիտայի ու ժողովրդի միջև երկկողմ հարաբերության ու կապի ձևավորմանը: Համաշխարհային գործընթացին և գլոբալացմանը միանալու կարևորագույն խնդիրը էլիտայի կողմից միմյանց և համաշխարհային համակարգի նկատմամբ վստահությունն է, քանի որ քաղաքական էլիտայի կողմից միմյանց նկատմամբ վստահության ձևավորման դեպքում նախադրյալներ են ստեղծվում քաղաքական համագործակցության, քաղաքական զարգացման և գլոբալացման գործընթացին հասնելու համար: Իսկ նման պայմանների բացակայությունը կամ դեֆիցիտը հասարակությունում քաղաքական ու սոցիալական պառակտման պատճառ է դառնալու:

Գլոբալացման և Իրանի քաղաքական էլիտայի միջև կապը պարզելու համար նախ պետք է ներկայացնել գլոբալացման սահմանումը, ապա անդրադառնալ Արևմուտքում և Իրանում էլիտաների տարբերություններին, ինպես նաև Իսլամական Հանրապետությունում էլիտայի ազդեցությանը: Թեման շարունակենք գլոբալացման սահմանումով:

**Գլոբալացում**

Գլոբալացումը, պարզ բացատրությամբ, նշանակում է սոցիալական փոխգործակցության գործընթացների ու ձևաչափերի աշխարհամասերի սահմաններից դուրս ներգործության չափորոշչի ընդլայնում և չափերի բարձրացում, դրա արագացում ու երաշխավորում: Գլոբալացումը վկայում է մարդկային կազմակերպման չափորոշչի տեղափոխման և փոփոխման մասին, միացնում է հեռավոր հասարակությունները և ընդլայնում աշխարհի տարածաշրջաններում ու աշխարհամասերում ուժային հարաբերությունների հասանելիությունը[1]: Ռոնալդ Ռոբերթսոնի տեսանկյունից գլոբալացման սահմանումը ներկայացվել է հետևյալ ձևակերպմամբ. «Աշխարհի խտացումն ու մեկ վայրի վերածելը» (Թեև նա նկատի ունի աշխարհի միավոր ու մեկ ամբողջություն լինելը, սակայն դա չպետք է շփոթել միասնական ու միաձուլված լինելու երկու հասկացությունների հետ)[2]:

Գլոբալացումը գիտական ու մտավոր թեմա է, մարդու մշակութային, սոցիալական և տնտեսական բոլոր կառույցներում հիմնարար ու արմատական

---

[1] **Դեյվիդ Հելդ** և **Անթոնի Մաք Գրոու**, Գլոբալիզացիան և նրա հակառակորդները, թարգմ.՝ Մասուդ Քարբասյանի, Ա տպագրություն, 2003, էջ 1:

[2] **Ռոնալդ Ռոբերթսոն**, Գլոբալիզացիա, թարգմ.՝ Քամալ Փուլադիի, «Սալես» հրատ., Գ տպագրություն, 2006, էջ 12:

փոփոխություն և զարգացում: Այն բնականոն ընթացքով մարդկային հասարակության գիտատեխնոլոգիական զարգացման գործընթաց է[3]:

**Գլոբալացման և քաղաքական էլիտայի կապը**

Երրորդ աշխարհի (չզարգացած) երկրների մեծ մասում քաղաքացիական խորհրդանիշների ձևավորման շնորհիվ այդ երկրների իշխող էլիտան ազգային գլոբալ որոշումների կայացման հարցում օժտված է ինքնատիպ դիրքով: Զարգացած երկրներում քաղաքական և սոցիալական ենթակառուցվածքներն արգելում են այդ երկրների քաղաքական վարքի վրա իշխող էլիտայի մենախոսությունը, մինչդեռ այդ գործընթացը, հատկապես Միջին Արևելքի երկրներում իշխող էլիտայի մտայնության արգասիքն է, և նմանատիպ մտածողությունը հիմնականում խիստ զբաղված է անվտանգության հարցերով: Այս տեսանկյունից, ի տարբերություն Արևելյան Ասիայի նոր զարգացած առանձին երկրների քաղաքական ու սոցիալական դիրքի, Միջին Արևելքի պատմությունը, մասնավորապես 20-րդ դարի երկրորդ կեսի մոդեռնիզմի շրջանում, ցուցադրում է դիմադրության տեղաբաշխումը և աշխարհի հիմնարար խնդիրների և հայեցակարգային հակվածությունների մասին թույլ իմացությունը: Այսպիսի գործընթացը հիմնավորվում է մասնավորապես գլոբալացման կապակցությամբ. մի կողմից այդ երկրներից շատերը լուրջ որոշում են կայացրել գլոբալացման հարցում՝ խորապես ազդվելով իշխող էլիտայի մտածելակերպից, մյուս կողմից էլիտայի վարքագծում առկա են մի տեսակ դիմադրություն և դանդաղ ընթացք, ինչպես նաև գլոբալացման բնութագրերի մասին թույլ իմացություն: Այս իրավիճակի իմաստն այն է, որ, ի վերջո, գլոբալացմանն առնչվելու շուրջ այդ երկրների որոշումներ կայացնելու կարողությունը թույլ է, և գլոբալացման գործընթացի նկատմամբ հաճախ նույնիսկ հակազդեցություն են դրսևորում ոչ թե դրական փոխգործակցության, այլ ընդամենը դիմադրության տեսքով:

Ինչպես գիտենք, ժողովրդավարության ամենահստակ և ամենաարժեքավոր գործոնը քաղաքական էլիտայի դաստիարակումն է, ընդ որում ժողովրդավարության ճիշտ ու հիմնարար գործիքներից են բանիմաց ու էլիտայի շարքերը դասվող այրերը, իսկ ժողովրդավարության ստեղծման անհրաժեշտ

[3] **Մահդի Նեքուի-Սամանի**, Կրոնը և գլոբալիզացիայի գործընթացը, «Բուսթան» հրատ., Գ տպագրություն, 2007, էջ 18:

պայմանն այն է, որ էլիտան աշխատանքի պայմանների ու խաղի կանոնների շուրջ համաձայնություն ձեռք բերած լինի[4]:

Այժմ թեման պարզաբանելու համար ներկայացնենք էլիտայի սահմանումը:

**Էլիտա**

«elit» հասկացությունը ծագում է «eligere» բառից, որը նշանակում է ընտրություն կամ ընտրել: 17-րդ դարում այն կիրառվում էր հատուկ որակի ապրանքները բնութագրելու համար[5]: Ինչպես նաև էլիտայամետ տեսությունները լայն մասշտաբով արծարծվեցին 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին՝ Եվրոպայում և ԱՄՆ-ում հետազոտողների քաղաքական ու սոցիալական նյութերում: Ընդհանուր իմաստով էլիտա է կոչվում անհատների այն խումբը, որը ցանկացած հասարակության մեջ զբաղեցնում է բարձր դիրքեր, կամ այլ կերպ ասած, էլիտան ընդգրկում է անհատների այն խումբը, որը գերակայություն ունի հատուկ ոլորտում[6]: Էլիտայի ամենաճշգրիտ սահմանումներից մեկը Փարթոյի սահմանումն է: Նա գտնում է, որ էլիտան այն անհատն է, ով էությամբ օժտված է մտավոր, ֆիզիկական ու հոգեկան առավելություններով: Այդ բարիքը բնությունն է պահ տվել անհատի էությանը և նա կյանքում շարունակական մրցակցություններում վաստակում է շատ բարձր նիշեր[7]: Իսկ մեկ այլ հեղինակ՝ Հարոլդ Լասոլը, էլիտա է համարում այն անհատներին, որոնց համար առավել հասանելի և վերահսկելի են արժեքները, իսկ քաղաքական էլիտան ընդգրկում է որևէ հասարակության մեջ ուժ ունեցող անհատներին[8]:

**Իրանի և Արևմուտքի էլիտաների տարբերությունը**

Արևմուտքի քաղաքական էլիտայի առանձնահատկություններից մեկը պետք է համարել այլոց բյուրոկրատական փորձից օգտվելը, մինչդեռ Իրանի քաղաքական էլիտան չի հավատում նման փորձին և այն համարում է

---

[4] **Հանինգթոն Սամուել**, Քսաներորդ դարի վերջում դեմոքրասիայի երրորդ ալիքը, թարգմ.՝ Ահմադ Շահսայի, Թեհրան, «Էլմ» հրատ., Ա տպագրություն, 1991, էջ 30:

[5] **Բաթամոր Թ.Բ.**, Էլիտան և հասարակությունը, թարգմ.՝ Ալիռեզա Թայեբի, Թեհրանի համալսարանի «Շիրազե» հրատ., Բ տպագրություն, էջ 14:

[6] Գոլդ և Ջուլիուս Ուիլիամ Լ. Քոլբ, Սոցիոլոգիայի մշակույթը, խմբային թարգմանություն, Թեհրան, «Մազիար» հրատ., Բ տպագրություն, 2005, էջ 835:

[7] **Նաղիբզադե Ահմադ**, Սոցիոլոգիայի ներածություն, «Մեհր» հրատ., Ե տպագրություն, 2006, էջ 35:

[8] **Ռոշե Քի**, Սոցիալական փոփոխություններ, թարգմ.՝ Մանսուր Վասղի, Թեհրան, «Նեյ» հրատ., 18-րդ տպագրություն, 2006, էջ 116:

քաղաքական ուժի անկման և կրճատման պատճառ: Պատճառը պետք է բացահայտել հոգեբանական գործոնների շրջանակներում: Իրանի քաղաքական մշակույթն այնպիսին է, որ համարձակությունը համարվում է ուժի հզորացման գլխավոր գործոններից մեկը: Համարձակության դերն ավելի հարուստ անցյալ և փորձ ունեցող էլիտայի քաղաքական գործունեության մեջ նվազում է[9]:

Իրանի հասարակությունում էլիտայի ուժի նվազման պատճառներից մեկը սոցիալական ուժերի և քաղաքական էլիտայի միջև քաղաքական ճեղքն է: Սա վկայում է քաղաքական էլիտայի եսակենտրոնության մասին: Ավտորիտարիզմի քաղաքական մշակույթը հանգեցնում է էլիտայի և սոցիալական խմբերի միջև տարաձության, և ըստ այդմ չի ստեղծվում ամուր հիմնարար կայան քաղաքական էլիտայի համար: Էլիտայի քաղաքական ուժի կայունությունը կարելի է գնահատել նրանց հզորացման ձևի մեջ, և քաղաքական ալիքները կարող են դառնալ նոր խմբերի առաջացման, ինչպես նաև էլիտայի ավանդական հավաքականների անկման պատճառներ[10]:

Քաղաքական էլիտայում տեղափոխումներն ու փոփոխությունները կարելի է համարել քաղաքական-սոցիալական անկայունության նշաններից մեկը: Ոմանք էլ այն համարում են սոցիալական ինստիտուտների անկայունությունից բխող գործընթաց: Երբ չեն ձևավորվում կայուն քաղաքական ենթակառուցվածքներ, բնականաբար անխուսափելի են դառնալու քաղաքական վարքագծում անվստահությունն ու անորոշությունը: Ինչպես իրանական հասարակությունն է փորձում քաղաքական նոր էլիտայի ձևավորման հարցում դյուցազնական կերպարներ կերտել, այնպես էլ անհրաժեշտ պատրաստակամություն ունի կոտրելու դյուցազնական կերպարները, և նրանց վարքային ձևաչափն ընդհանրապես հանգեցնելու է քաղաքական էլիտայի խաբկանքին:

**Քաղաքական էլիտայի տեսակետները գլոբալացման վերաբերյալ**

Ըստ ԻԻՀ-ի՝ գլոբալացման նկատմամբ Իրանի էլիտայի հակոտնյա դիրքն ինքնին սպառնալից խնդիր է համարվում: Այս անհամաձայնությունը կարող է այս կերպ մեկնաբանվել, որ Իրանն ունակ չէ որոշում կայացնելու միջազգային ասպարեզում գլոբալացման բացասական ազդեցությունները կրճատելու կապակցությամբ: Կարծիքների այս տեսակ ցրվածությունը խոչընդոտում է ցանկացած տեսակի որոշումների կայացումն ու միջազգային

[9] **Մոսալանեժադ Աբբաս**, Իրանի քաղաքական մշակույթը, «Ֆարհանգե Սաբա» հրատ., էջ 143:
[10] Նույն տեղում, էջ 145:

ասպարեզում Իրանի ակտիվ մասնակցությունը: Այս կապակցությամբ Իրանի էլիտայի մոտ առկա են երեք տարբեր տեսակետներ. էլիտայից ոմանք ներգրավված են սահմաններից այն կողմ և առնվազն իրենց համար գիտական լուծումներ չունեն: Նրանց համար հիմնական խնդիրը ցանկացած գնով միջազգային ասպարեզում ներկա գտնվելն է: Այլ կերպ ասած, այս խումբը ցանկանում է մի տեսակ հավասարվել Արևմուտքի քաղաքակրթության ու դրսևորումների հետ, և գլոբալացման գործընթացը գնահատում են մարդկային երջանկության և զարգացման ուղղվածությամբ: Երկրորդ խումբն այն էլիտան է, որը գլոբալացման դեմ մի տեսակ խիստ դիմադրությունն է պաշտպանում: Այս խումբը Իրանի հասարակությանն ու քաղաքականությանն ուղղված գլոբալացման հարվածները փշրող է համարում, և հենց այդ հանգամանքի շնորհիվ սեփական մտքերի ու կարծիքների հարցում մի տեսակ մոլորված են: Երրորդ խումբն Իրանի հասարակությունը կարգավիճակային հայացքով է դիտարկում, սակայն ռացիոնալիստ են և գլոբալացումը սպառնալիքի նման մի բան համարելով՝ միաժամանակ պաշտպանում են նաև նրա միջոցով ստեղծված հնարավորությունները: Այս խումբը գտնում է, որ Իրանը շատ արժեքավոր պոտենցիալ հնարավորություններ և առանձնահատուկ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական տեղ ունի, և մեր միակ թույլ կողմը ճիշտ կառավարումն է և ուղեգծի որդեգրումը: Անկասկած Իրանի ապագա վարքագիծը միջազգային ասպարեզում պայմանավորված է նրանով, որ վերը նշված երեք խմբերի էլիտաներն էլ կարողանան կոնսենսուսի գալ և քաղաքական, տնտեսական ու մշակութային տարբեր բնագավառներում զարգացում ապրել[11]:

**Իսլամական հեղափոխության մեջ Իրանի էլիտայի դերը**

ԻԻՀ համակարգում ևս ցանկացած այլ քաղաքական համակարգի օրինակով, քաղաքականության հակամարտությունը մշտապես ընթացել է էլիտայի միջև, սակայն տարբեր շրջաններում տարբեր են եղել նրա ձևը, տիրույթն ու ուժգնությունը: Երջանկահիշատակ Իմամ Հոմեյնիի կենդանության օրոք, հաշվի առնելով հեղափոխության հաղթանակին հաջորդող պայմանները և Իմամի անձի կենտրոնացվածությունն ու իշխանությունը (Authority), ոչ միայն այնքան էլ ակնառու չէր էլիտայի հակամարտությունը, այլև կառավարությունն այս շրջանում, քաղաքական անվտանգությունն ու կայունությունն ապահովելու նպատակով, փորձել է սահմանափակել քաղաքական

[11] **Սարիոլղալամ Մահմուդ**, Ռացիոնալիզմն ու զարգացածությունն Իրանում, «Ֆարզան» հրատ., Բ տպագրություն, 2012, էջ 190:

ակտիվությունը և նվազագույնի հասցնել հակամարտությունը քաղաքական էլիտայի ներսում: Հաշեմի Ռաֆսանջանիի նախագահության շրջանում կառավարությունը քաղաքական կայունությունն ապահովելու նպատակով փորձում էր անփոփոխ ու կայուն պահել քաղաքական վեճերի տիրույթն ու ուժգնությունը, որպեսզի այս ճանապարհով մի կերպ ապահովի տնտեսական աճի ու զարգացման նախադրյալները: Սեյեդ Մոհամմադ Խաթամիի կառավարության գործունեության ժամանակ անցյալի համեմատ ընդհանուր հաշվով տարբերություն նկատվեց քաղաքական էլիտայի հակամարտությունների վիճակի հարցում: Նոր կառավարությունն այն ենթադրությամբ ծավալեց իր գործունեությունը, որ քաղաքական զարգացումն Իրանի հասարակության հիմնական պահանջն է կամ առնվազն հիմնական պահանջներից մեկը, և մրցակցության ընդլայնումը և նույնիսկ քաղաքական հակամարտությունը ոչ միայն չեն հանգեցնում քաղաքական կայունության թուլացմանը, այլև նպաստում են համակարգի կայունությանն ու ամրապնդմանը[12]:

**Էլիտայի քանդումը և մրցակից խմբերը**

Էլիտայի քանդումն ու մրցակից խմբերը միջազգային ու համաշխարհային ասպարեզում չհամագործակցելու մեկ այլ խոչընդոտ են: Արտասահմանյան ոլորտում անվստահությունը կամա թե ակամա փոխանցվում է նաև ներքին քաղաքական ոլորտներ, և ականատեսն ենք լինում այն իրավիճակի, երբ 1996 թ. մեկ տասնամյակ Իրանի քաղաքական ոլորտում իշխող մտածելակերպն այն էր, որ բարեփոխիչների և մոդեռնիստների թևի մտավորականության մի ստվար զանգված համարվում է արևմտյան դրածո ուժ: Տարբեր ժամանակաշրջաններում նկատվել է ներքին ընդդիմադիր խմբերի նկատմամբ հոռետեսություն, և Փահլավիների թագավորության ժամանակ ևս հեղափոխական ու հակաիշխանական ընդդիմադիր խմբերը համարվում էին իսլամական մարքսիստներ: Ինչպես նաև Սեյեդ Մոհամմադ Խաթամիի նախագահության ժամանակ 1996 թ. ավելի ընդգծվեց բարեփոխիչներ և մտավորականներ գիտական եզրույթների կիրառումը: Նաև երբ Մոհամմադջավադ Արդեշիր Լարիջանին բանակցություններ վարեց Բրիտանիայի ԱԳՆ Միջին Արևելքի գլխավոր վարչության պետ Թիք Բրադենի հետ, Իրանի քաղաքական խմբերը փորձեցին բանակցությունը համարել արտասահմանյան ազդեցիկ կենտրոնների հետ ներքին գործակալների հանցավոր համաձայնություն: Ի վերջո, ստեղծվեց այնպիսի քաղաքական ալիք, որի շնորհիվ Իրանի քաղաքական

[12] **Էֆթեխարի Ասղար**, Ներածություն՝ քաղաքական մրցակցությունում կարմիր գծերի վերաբերյալ, «Ֆարհանգե գոֆթեման» հրատ., 2000, էջ 20:

էլիտային վերագրվեցին մեծ տերությունների գործակալության որոշակի դրսևորումներ: Սա ցույց է տալիս, որ Իրանում նույնիսկ քաղաքական մրցակցությունն ուղեկցվում է հոռետեսության դրսևորումներով: Իրանի էլիտայի շատ դեմքեր, այդ թվում՝ Մոսադեղը, երբ առաջնորդում էր նավթարդյունաբերության ազգայնացման գործընթացը, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության անմիջական գործակալն էր: Այդ պատճառով է, որ անգլոֆիլ, ռուսոֆիլ և ամերիկոֆիլ եզրույթները տարածվեցին Իրանի քաղաքական գրականության մեջ և «Քեռի Նապոլեոն» գիրքը կարելի է համարել միջազգային շրջանակների նկատմամբ իրանցիների ուժեղացված հոռետեսության արտացոլումը[13]:

Մեր էլիտան սովորաբար պատահաբար է հասնում որոշում կայացնելու ասպարեզին: Ստատուս քվոյի պահպանման ուղղությամբ ցանկությունը քաղաքական էլիտայի պատահականության արգասիքն է: Այդպես չի եղել, որ մեր էլիտան անցյալում քաղաքականության, իրավագիտության, մշակույթի, փիլիսոփայության կամ այլ դասընթացներ է անցկացրել, փոքր-ինչ փորձառություն է ձեռք բերել և ճանաչել աշխարհը, երկու-երեք օտար լեզու գիտի և Իրանի ու աշխարհի վերաբերյալ ճշգրիտ աշխարհայացք ունի: Ուստի եթե ցանկանանք երկրում գլոբալացման թեման դիտարկել որպես մի իրական խնդիր և ասել, որ ցանկանում ենք աշխարհի հետ փոխգործակցություն ունենալ, դա այն ժամանակ է կարևորվում, երբ մտածենք, որ ուզում ենք նավթային եկամուտները վերցնել և այդ եկամտից ազգային հարստություն ստեղծել: Այդ ժամանակ գլոբալացումը կարևորվում է, և աշխարհի նկատմամբ մեր հայացքն այնպիսին է լինում, որ ցանկանում ենք աշխարհի հետ գործունեություն ծավալել, և մեր այսօրվա պայմանները բավարար են, որպեսզի քաղաքական ինքնավստահություն ունենանք և աշխարհի հետ համագործակցենք: Եվ մեր մտավոր ու քաղաքական խառնաշփոթը մեծ մասամբ անհատների խառնաշփոթի արգասիքն է, քան Իրանում գլոբալացման թեման, որն ավելի շուտ քաղաքական և մշակութային-քաղաքական թեմա է, քան տեխնիկական-տնտեսական հարց[14]:

Այն քաղաքական համակարգը, որն օժտված է ժողովրդավար էլիտայով, քաղաքական ճգնաժամի պայմաններում ապավինում է հակազդող

---

[13] **Մոսալանեժադ Աբբաս**, Իրանի քաղաքական մշակույթը, «Ֆարհանգե Սաբա» հրատ., էջ 160:

[14] **Սարիոլղալամ Մահմուդ**, Ռացիոնալիզմն ու զարգացածությունն Իրանում, «Ֆարզան» հրատ., Բ տպագրություն, 2012, էջ 3:

վարքային ձևաչափերին[15]: Էլիտայամետությունը կարող է կիրառվել որպես մոդեռնիզմի ինչ-որ մեխանիզմ, հանգեցնել հասարակության մեջ դրդապատճառի ու ոգևորության առաջացմանը, երկրի ներսում առաջացնել ներքին համերաշխություն և երկրների միջև ստեղծել ամուր կապեր[16]: Զարգացման ուղղվածությամբ պետությունները սովորաբար կառավարվում են զարգացման ուղղվածությամբ էլիտայի կողմից: Այդ էլիտայի առանձնահատկություններն են՝ հաստատակամություն զարգացումն առաջնորդելու հարցում, տնտեսական աճի ու զարգացման հարցով հետևողականություն, նպատակներն առաջ մղելու կարողություն և տնտեսական ու սոցիալական արատներից խուսափում: Այս էլիտան ներկա է վարչական, ռազմական և ոչ ռազմական բարձր մակարդակներում ու քաղաքական ավագ պաշտոններում և առաջ է շարժվում գլոբալացման ուղղությամբ:

**Եզրակացություն**

Իրանում գլոբալացման փուլին հասնելու համար նախ պետք է էլիտայի վերահսկման փոխարեն իրականացնել էլիտայի կառավարում: Ինչպես նաև գլոբալացման ընթացքից և համաշխարհային հասարակությունից Իրանի հետ մնալու պատճառը հասարակության քաղաքական էլիտայի անհամաձայնությունն է, քանի որ էլիտայի նկատմամբ չափազանց ուժեղ վերահսկումը թուլացնում է նրանց: Զարգացած հասարակություններում քաղաքական համակարգը պահանջում է էլիտայի ստեղծագործությունն ու արդյունավետությունը: Նման հասարակություններում առկա է կառավարման հարացույց (պարադիգմա /Paradigm/), որը չզարգացած երկրների վերահսկման հարացույցի հակառակ բևեռում է հայտնվում, որտեղ էլիտան անտարբեր չէ հասարակության նկատմամբ և ծառայում է նրան: Իրանի հասարակությունում էլիտան կազմակերպման և ձևավորման կարիք ունի, որպեսզի կազմակերպի ծրագրերն ու նպատակները, բացահայտի և ոչնչացնի հասարակության արատները: Հասարակության էլիտան համակարգի ուղեղի դերն է խաղում, և նրա մոտ է գտնվում համակարգի գրավիտացիոն կենտրոնը, որպեսզի լուծումներ ստեղծելով և հասարակության հանգույցները քանդելով, գործունեություն ծավալի սեփական մոտեցումները հասարակության կառավարման

---

[15] **Սարիոլղալամ Մահմուդ**, Քաղաքացիական հասարակության հեռանկարը Միջին Արևելքում: Մշակութային խոչընդոտների վերլուծություն, «Միջին Արևելքի ուսումնասիրությունները» պարբերական, հ. 24, էջ 65:

[16] **Հուդեր Ռաբերթ**, Զարգացման աշխարհագրությունն աշխարհում և Իրանում, թարգմ.՝ Ֆազլիե Խանի, «Ղումս» հրատ., 2006, էջ 54:

նպատակով կիրառելու ուղղությամբ: Էլիտայամետ մոտեցումը էլիտայի գերակայության իմաստ չի պարունակում, այլ նշանակում է լավագույնի, ամենակրթվածի և ամենակատարյալի մուտքը քաղաքականության և որոշումների կայացման ոլորտ՝ երկիրը կառավարելու նպատակով: Էլիտայամետություն նշանակում է արժանավորի գերակայություն և օգտագործում է ամենակարող անհատների ներուժը՝ գիտական մեթոդով ու տրամաբանությամբ, և հասարակության խնդիրները լուծվում են ոչ թե փիլիսոփայության, այլ խնդիրների լուծման շրջանակներում. և հասարակության էլիտան է, որը երկիրն առաջնորդում է դեպի զարգացում ու բարօրություն, և, ունենալով համակարգված ու որոշակի ծրագիր ու նպատակ, քայլ է վերցնում գլոբալացման ուղղությամբ, որպեսզի հետ չմնա այլ երկրներից, որոնք միացել են գլոբալացման համակարգին: Չնայած գլոբալացումն ինքնին, կամա թե ակամա, երկրներում լարվածություն է ստեղծում, և այն երկրներն են հաջողակ, որոնք հարմարվել են այս ընթացքին և ոչ թե այն խոչընդոտ են համարել և ջանքեր գործադրել դրա դեմ, այլ առաջ են շարժվում այդ ճանապարհով: Իրանի էլիտան ևս պետք է ջանքեր գործադրի համաշխարհային ընթացքից և համապատասխան գործոններից հետ չմնալու ուղղությամբ:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Իրանի հասարակության մեջ էլիտան ձևավորման կարիք ունի, որպեսզի կազմակերպի ծրագրեր և նպատակներ, բացահայտի և վերացնի հասարակության հիվանդությունները: Էլիտար մոտեցումը նշանակում է մուտք քաղաքականություն և որոշումների կայացում լավագույն, կրթված և ամենակատարյալ մարդկանց կողմից՝ պետությունը ղեկավարելու նպատակով:

Էլիտարիզմը կիրառում է ամենակարող անհատների ներքին ուժը, հասարակական էլիտան գիտական մեթոդով երկիրը տանում է դեպի զարգացում և, ունենալով համակարգված ծրագիր և նպատակներ, քայլեր է անում գլոբալացման ուղղությամբ, որպեսզի հետ չմնա գլոբալացման համակարգին միացած երկրներից: Իրանի էլիտան նույնպես պետք է ջանքեր գործադրի, որպեսզի հետ չմնա համաշխարհային պրոցեսից:

***Բանալի բառեր*** **-** էլիտա, գլոբալացում, Իրան:

## РОЛЬ ПОЛИТИЧЕСКОЙ ЭЛИТЫ ИРАНА В ВОПРОСЕ ПРИСОЕДИНЕНИЯ К ЭТАПУ ГЛОБАЛИЗАЦИИ

МОРТЕЗА РАМЕЗАНИ

В иранском обществе элита имеет необходимость формирования, чтобы организовывать программы и цели, выявлять и уничтожать болезни общества. Элитный подход означает вход в политику и вынесение решений лучшими, образованными и самыми совершенными людьми - с целью управления государством. Элитаризм использует внутреннюю силу всесильных личностей, научным методом, и общественная элита ведет страну к развитию и, имея систематизированную программу и цели, делает шаги в сторону глобализации, дабы не отставать от стран, присоединившихся к системе глобализации. Элита Ирана также должна приложить усилия, чтобы не отставать от всемирного процесса.

***Ключевые слова*** – элита, глобализация, Иран.

## THE ROLE OF IRAN'S POLITICAL ELITE WITH REGARD TO GLOBALIZATION PROCESSES

MORTEZA RAMEZANI

In the Iranian society the educated elite has the need to be shaped in order to plan programs and goals, to disclose and eliminate social maladies. This means the admission of most outstanding, best-educated individuals into decision-making circles and politics to govern the country. The approach of the educated elite is to use the inner force of the most efficient individuals and scientific methods to develop the country. Having systemized programs and objectives and by creating shared consciousness and sense of global responsibility in world issues, the elite should aim to integrate the country into these international processes of globalization and thus keep pace with other integrated countries.

***Key words –*** elite, globalization, Iran.